ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ տնտեսական վիճակը
Ամսական տեսություն
(Հոկտեմբեր 2017թ)

ԵՐԵՎԱՆ 2017

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լագային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժութային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից

արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնային շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

1.Տնտեսական ակտիվություն և գնաճ....5
2.Հիմնական ճյուղերի զարգացումներ....12
3.Արտաքին առևտուր....18
4.Միջին աշխատավարձ....22
5.Պետական ֆինանսներ....24
Հավելված....27

1.Տնտեսական ակտիվություն և գնաճ

2017թ-ի հոկտեմբեր ամսին ՀՀ-ում տնտեսական ակտիվության ցուցանիշը կտրուկ թռիչք է ունեցել: Նախորդ ամսվա նկատմամբ թողարկման իրական ծավալը, ճիշտ է, նվազել է 7.5 տոկոսով, սակայն նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ աճը կազմել է ***17 տոկոս:*** 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ թողարկման իրական ծավալի աճը հասել է ***7 տոկոսի:*** Նախորդ տարվա նկատմամբ բարձր ցուցանիշը պայմանավորված է ծառայությունների, գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում գրանցված կտրուկ աճով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ անկումը՝ առևտրի ոլորտով:

Գծապատկեր 1 Տնտեսական ակտիվության ցուցանիշի դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին, նախորդ ամսվա նկատմամբ[1]



[1]Այսև մյուսգծապատկերներումնախորդամիսներիցուցանիշներիցորոշներըճշգրտվածեն՝ պայմանավորված ՀՀ ԱՎԾ կողմիցնախկինումներկայացվածտվյալներիհետագաճշգրտումներով:

Դիտարկվող ամսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ արձանագրված տնտեսական ակտիվության ցուցանիշի դինամիկան որոշակիորեն արտացոլել է դրական բազային էֆեկտը: Սակայն որպես բարձր աճի բացատրություն՝ սա իհարկե, լինել չի կարող: Ամսվա կտրվածքով աճը գրեթե ամբողջությամբ առաջարկի գործոններով է պայմանավորված, իսկ կուտակային ցուցանիշներն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ներքին սպառողական պահանջարկի էական վերականգնումը տարեսկզբից նույնպես իրողություն է:

Գծապատկեր 2 Տնտեսական ակտիության ցուցանիշը նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ, 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին



Հոկտեմբեր ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշի նպաստումների մասով, ըստ մեր գնահատականների, համամասնությունների էական փոփոխություն չի արձանագրվել: Նախորդ տարվա հոկտեմբեր ամսվա նկատմամբ աճին ամենամեծ նպաստումն ունեցել է ծառայությունների ոլորտը(9.1%-ային կետ), որին հաջորդում են գյուղատնտեսությունն(5.5%-ային կետ) ու արդյունաբերությունը(2.8%-ային կետ):

2016թ հունվար – հոկտեմբեր ամիսների նկատմամբ ՏԱՑ-ին ամենամեծ դրական նպաստումն ունեցել է ծառայությունների ոլորտը, որին հաջորդում է արդյունաբերությունը:

Գծապատկեր 3 Հիմնական ճյուղերի նպաստումները 2017թ հոկտեմբեր ամսվա տնտեսական ակտիվության ցուցանիշին նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ, տոկոսային կետ[2]



[2]Նպաստումների հաշվարկն իրականացվել է մեր կողմից, հիմք ընդունելով 2016թ ՀՆԱ-ում հիմնական ճյուղերի ունեցած կշիռները: Այլ գործոնները ներառում են տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և ՏԱՑ-ի ու ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանական տարբերությունների պատճառով առաջացած շեղումը:

Հաշվետու ամսին պահպանվել է սպառողական շուկայում գնաճն արագացել է՝ ինչպես նախորդ ամսվա նկատմամբ, այնպես էլ 12 ամսյա: Սեպտեմբերի նկատմամբ սպառողական ապրանքների և ծառայությունների գներն աճել են 0.8 տոկոսով՝ արագանալով 0.6 տոկոսային կետով, իսկ 12 ամսյա գնաճը կազմել է 1.2 տոկոս՝ արագանալով 0.2 տոկոսով:

Գծապատկեր 4 Սպառողական գների ինդեքսի դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին, նախորդ ամսվա նկատմամբ



Նախորդ ամսվա նկատմամբ գնաճին առավելապես նպաստել են սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գների 1.3 տոկոս աճը(նպաստումը՝ 0.52%-ային կետ), իսկ 12 ամսյա գնաճին՝ կրկին նույն ապրանքախմբի գների 3.6 տոկոս աճը(նպաստումը՝ 1.5%-ային կետ):

Գծապատկեր 5 Խոշորացված ապրանքախմբերի նպաստումները 2017թ հոկտեմբեր ամսվա սպառողական գների ինդեքսին 2016թ նույն ամսվա նկատմամբ, տոկոսային կետ[3]



Հաշվետու ամսին արդյունաբերական շուկայում նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.9%, իսկ նախորդ համադելի ժամանակաշրջանի նկատմամբ 3.5% գնաճ՝ նախորդ ամսվա նկատմամբ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

[3]Նպաստումների հաշվարկը՝ մեր կողմից, հիմք ընդունելով ՀՀ սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար խոշորացված ապրանքների և ծառայությունների խմբերի տեսակարար կշիռները՝ վերանայված 2016թ-ին

Գծապատկեր 6 Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին, նախորդ ամսվա նկատմամբ



Գծապատկեր7 Տնտեսական ակտիվության ցուցանիշը և գների ինդեքսները 2016թ-ի հունվար-դեկտեմբեր և 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին, նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ



2.Հիմնական ճյուղերի զարգացումներ

Հոկտեմբեր ամիսը բնորոշվում է նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ բոլոր ճյուղերի՝ ծառայությունների, առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության ու շինարարության աճով:

Նախորդ ամսվա նկատմամբ հաշվետու ամսին շինարարության իրական ծավալն աճել է 0.1%, գյուղատնտեսական արտադրանքի իրական ծավալը՝ 4.5%, ծառայությունների իրական ծավալը՝ 2.4%-ով, և 1.4%-ով նվազել է առևտրի շրջանառության ծավալը:

Գծապատկեր 8 Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին (մլն դրամ)



Գծապատկեր 9 Գյուղատնտեսական արտադրանքի ծավալի դինամիկան 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին (մլն. դրամ)



Գծապատկեր 10 Շինարարության ծավալի դինամիկան 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին (մլն. դրամ)



Գծապատկեր 11 Ծառայությունների ծավալի(առանց առևտրի) դինամիկան 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին (մլն դրամ)



Գծապատկեր 12 Առևտրի շրջանառության ծավալի դինամիկան 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին (մլն. դրամ)



Գծապատկեր 13 Տնտեսության հիմնական ոլորտներում ստեղծված արդյունքի և առևտրի ծավալների ինդեքսները 2016թ-ի հունվար-դեկտեմբեր և 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին, նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ



3.Արտաքին առևտուր

Հոկտեմբեր ամսին նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ արձանագրվել է արտաքին առևտրի աճի տեմպերի փոքր դանդաղում՝ և՛ արտահանման, և՛ ներմուծման մասով: Այսպես, արտահանումն աճել է 24.3, ներմուծումը 29.7, իսկ արտաքին առևտրաշրջանառությունը՝ 27.9 տոկոսով: Արտահանման աճի տեմպը դանդաղել է 0.9, ներմուծման աճի տեմպը՝ 2.1, իսկ արտաքին առևտրաշրջանառությանը՝ 0.4 տոկոսով:

Նախորդ ամսվա նկատմամբ դինամիկան այսպիսին է. արտաքին առևտրաշրջանառությունը աճել է 1.8 տոկոսով, ընդ որում՝ արտահանումը նվազել է 0.7, իսկ ներմուծումն աճել 3.1 տոկոսով:

Գծապատկեր 14 Արտաքին առևտրաշրջանառության ծավալների 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին (մլն. դոլար)



Հաշվետու ամսին արտաքին առևտրաշրջանառության 12 ամսյա աճին ավելի շատ նպաստել է ներմուծումը, քան արտահանումը: Առաջինի նպաստումը կազմել է 19.9, իսկ երկրորդինը՝ 8%-ային կետ:

Գծապատկեր 15 Արտաքին առևտրաշրջանառության ծավալի 12 ամսյա աճին արտահանման և ներմուծման նպաստումները 2017թ-ի հոկտեմբերին, տոկոսային կետ



Գծապատկեր 16 Արտահանման և ներմուծման ծավալների դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին(մլնդոլար)



Գծապատկեր 17 Արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների ծավալների ինդեքսները 2016թ-ի հունվար-դեկտեմբեր և 2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին, նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ



4.Միջին աշխատավարձ

Հաշվետու ամսին և՛ միջին անվանական, և միջին իրական աշխատավարձի 12 ամսյա աճը նախորդ ամսվա նկատմամբ դանդաղել է: Այսպես, միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 1.45, իսկ միջին իրական աշխատավարձը 0.25 տոկոսով՝ նախորդ ամիս արձանագրված աճից ցածր 2 և 2.3 տոկոսային կետերով:

Նախորդ ամսվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն նվազել է 0.6, իսկ իրական աշխատավարձը՝ 1.4 տոկոսով:

Գծապատկեր 18 Միջին ամսական աշխատավարձի[4] դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին (ՀՀդրամ)



[4]Միջին աշխատավարձի իրական աճը հաշվարկվել է մեր կողմից:

Նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ միջին աշխատավարձի իրական աճի տեմպըմնացել և տատանվում է իր աճի տրենդի շուրջ, որին նպաստում է բազային էֆեկտը(նախորդ տարի ցուցանիշը հակառակ տրենդն է ունեցել՝ ամսվա վերջին մոտենալով զրոյի):

Գծապատկեր 19 Միջին իրական աշխատավարձի աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



5.Պետական ֆինանսներ

ՀՀ ԿԲ-ում Կառավարության հաշիվները հոկտեմբերի վերջին կազմել են 73.954 մլրդ դրամ, որը մոտ է 2016թ-ի հոկտեմբերի վերջին արձանագրված մակարդակին:

Գծապատկեր16 ՀՀ Կառավարության հաշիվները ԿԲ-ում, մնացորդ ամսվա վերջի դրությամբ, և 12 ամսյա հավելաճի տեմպը



Հաշվետու ամսին ՀՀ պետական պարտքի աճի տեմպը գրեթե պահպանվել է նախորդ ամսվա մակարդակում: Պարտքը դոլարային արտահայտությամբ հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.18%, իսկ 2016թ-ի հոկտեմբերի վերջի դրությամբ գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել 12.3%-ով: Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ պետական պարտքում ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը կազմել է 90.34%, իսկ ՀՀ ԿԲ արտաքին պարտքի կշիռը՝ 9.65%:

Գծապատկեր21 ՀՀ պետական պարտքի, Կառավարության պարտքի և ԿԲ-ի պարտքի դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին, մլն ԱՄՆ դոլար



2017թ-ի հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը դրամային արտահայտությամբ կազմել է 3,037 մլրդ դրամ, որում ներքի պարտքի կշիռը կազմել է 19.75%, իսկ արտաքին պարտքի կշիռը՝ 80.24%:

Գծապատկեր 22 ՀՀ արտաքին պետական պարտքի և ՀՀ ներքին պետական պարտքի դինամիկան 2017թ-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներին, մլրդ դրամ



Հավելված

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2017թ. հոկտեմբերին, ըստ ՀՀ ԱՎԾ-ի

		Չափի միավոր	2017 թվականի							
			սեպտեմբեր	սեպտեմբերը 2016թ. սեպտեմբերի նկատմամբ, %	սեպտեմբերը օգոստոսի նկատմամբ, %	հոկտեմբեր	հոկտեմբերը 2016թ. հոկտեմբերի նկատմամբ, %	հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ, %	հունվար-հոկտեմբեր	հունվար-հոկտեմբերը 2016թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %
1.	Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	102.9✧	108.3✧	x	117.0	92.5	x	107.0
1.1.	արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն.դրամ	146 413.6	108.3	104.7	153 179.4	116.5	103.7	1 338 330.6	112.4
1.2.	գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	մլն.դրամ	122 606.7	88.4	136.3	153 166.7	134.7	104.5	735 677.7	95.9
1.3.	շինարարության ծավալը	մլն.դրամ	42 233.8✧	106.0✧	102.5✧	43 771.1	105.7	100.1	274 599.0	99.1
1.4.	առևտրի շրջանառությունը	մլն.դրամ	225 870.1	114.2	103.1	225 781.0	115.1	98.6	2 016 663.8	112.8
1.5.	ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն.դրամ	137 422.8	116.2	105.9	140 601.5	122.4	102.4	1 182 167.6	113.9
2.	Սպառողական գների ինդեքսը	%	x	101.0	100.2	x	101.2	100.8	x	100.7
3.	Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը	%	x	104.1	100.1	x	105.4	100.9	x	103.9
4.	Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն.կՎտ.ժ	622.1	105.2	98.3	567.8	95.4	91.3	6 313.0	105.4
5.	Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	191 377✧	102.1✧	100.7✧	190 165	104.8	99.4	189 972	102.6
5.1.	պետական	դրամ	157 133✧	100.1✧	97.6✧	158 076	101.5	100.6	159 597	99.9
5.2.	ոչ պետական	դրամ	230 803✧	102.4✧	103.2✧	227 110	106.3	98.4	226 489	103.6
6.	Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն.դոլար	604.9✧	128.8✧	112.2✧	615.9	127.9	101.8	4 979.8	122.4
		մլրդ.դրամ	289.3✧	x	x	296.0	x	x	2 400.6	x
6.1.	արտահանում	մլն.դոլար	204.2✧	126.4✧	102.4✧	202.7	124.3	99.3	1 745.4	119.4
		մլրդ.դրամ	97.7✧	x	x	97.4	x	x	841.4	x
6.2.	ներմուծում	մլն.դոլար	400.7✧	130.1✧	117.9✧	413.2	129.7	103.1	3 234.4	124.0
		մլրդ.դրամ	191.6✧	x	x	198.6	x	x	1 559.2	x
7.	Դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ		478.24	x	x	480.74	x	x	482.41	x